ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբերի 2018թվականի N 912

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի 137-Ն որոշումն՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1.Ծախսային մասում՝

1) 5 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Տրանսպորտային նյութեր» /4264/ հոդվածում «42583.1» թիվը փոխարինել «37148.1» թվով, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «48350.0» թիվը փոխարինել «53650.0» թվով, «Պարտադիր վճարներ» /4823/ հոդվածում «360.0» թիվը փոխարինել «495.0» թվով:

2) 1 բաժնի 3 խմբի 1 դասի 51 ծրագրի «Գույքի և սարքավորումների վարձակալություն» /4216/ հոդվածում «203.0» թիվը փոխարինել «0» թվով, «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» /4112/ հոդվածում «0» թիվը փոխարինել «203.0» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2018թվականի N 913

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Անհատ ձեռնարկատեր Սոնյա Ալեքսանյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև2018 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝ քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, շենք 8-ա, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, ՀՄ հանրակացարան հարող տարածք/ առևտրի օբյեկտ՝ ոչ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018թվականի N 914

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի N115-Ն որոշմամբ հաստատված հավելվածը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Անհատ ձեռնարկատեր Գաբրիել Հակոբյանին տալ ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը /գրանցման հասցե՝քաղաք Հրազդան, Վանատուր թաղամաս, շենք 8-ա, գործունեության հասցե՝ քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Տեխ-հանրակացարան /առևտրի օբյեկտ՝ հիմնական շինություն, մինչև 26 քառակուսի մետր մակերես//:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018թվականի N 915

ԳՐԵՏԱ, ԱԼՎԱՐԴ, ՌՈՒԶԱՆՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջի և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Գրետա Մաթևոսյանի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Գրետա, Ալվարդ, Ռուզաննա Մաթևոսյանների կողմից փաստացի ավել օգտագործվող 0.0193 հա մակերեսով հողամասի /0967-0146 ծածկագրում/ նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2018թվականի N 916

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՄԱՍԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասի, կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջների և հիմք ընդունելով Գուրգեն Գիտունի Մարգարյանի 2018 թվականի օգոստոսի 31-ի դիմումը, Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռը՝ 2-28-2007թ., տրված՝ 2007 թվականի մայիսի 8-ին, համապատասխան որակավորում ունեցող «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Օրինական ճանաչել Գուրգեն Մարգարյանին պատկանող Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Չարենցի փողոց թիվ 26 հասցեում գտնվող բնակելի տան առաջին հարկի ինքնակամ կառուցած 17.74 քմ արտաքին մակերեսով մասը,երկրորդ հարկի ինքնակամ կառուցած 41.95 քմ արտաքին մակերեսով մասը, ինքնակամ կառուցած 24.20 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը:
2.Հողամասի սահմանները որոշվում են «ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3.Ինքնակամ կառուցած 24.20 քմ արտաքին մակերեսով տնտեսական շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:
5.Սույն որոշման ընդունման օրվանից բնակելի տան առաջին հարկի ինքնակամ կառուցած 17.74 քմ արտաքին մակերեսով մասի օրինականացման համար սահմանված 23100 /քսաներեք հազար մեկ հարյուր/ դրամ գումարը, երկրորդ հարկի ինքնակամ կառուցած 41.95 քմ արտաքին մակերեսով մասի օրինականացման համար սահմանված 54600 /հիսունչորս

հազար վեց հարյուր/ դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Բնակելի տան առաջին և երկրորդ հարկերի ինքնակամ կառուցած մասերը, ինքնակամ կառուցած տնտեսական շինությունը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

7.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնին:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**